Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի ԹԻՎ ԹԻՎ 237-Ա, 240-Ա ԵՎ 241-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 237-Ա որոշման մեջ հղում է կատարված «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածին, համաձայն որի՝ նույն օրենքի 2-րդ հոդվածով սահմանված 300 քառակուսի մետր հողամասից ավել զբաղեցված, չկառուցապատված հողամասի օտարման կարգը։

Համայնքի ղեկավարի որոշման մեջ հղում է կատարվել նաև ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ հոդվածներին, համաձայն որոնց՝ առաջին պետական գրանցման աշխատանքների իրականացման ընթացքում կադաստրային քարտեզագրման արդյունքում անշարժ գույքի նկատմամբ իրավունքը հաստատող փաստաթղթերում սեփականատերերի կողմից նշված չափից մինչև 20 տոկոս ավելի յուրաքանչյուր միավոր հողամասի կամ սեփականաշնորհված ընդհանուր հողաբաժնի չափից փաստացի օգտագործման դեպքում նշված հողատարածության նկատմամբ նրանց սեփականության իրավունքի ճանաչումը։

Հետևաբար, համայնքի ղեկավարի որոշման մեջ անհրաժեշտ է հստակեցնել որոշման ընդունման համար հիմք հանդիսացող իրավական ակտը։

Թիվ 240-Ա որոշման դրույթները ճիշտ չեն համարակալված։

Թիվ 241-Ա որոշման 3-րդ կետում «Մադաթյան» բառից առաջ անհրաժեշտ էր գրառել «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Անի համայնք, քաղաք Մարալիկ» բառերը։

13.06.2022 թ.